



Здесь, в стенах библиотеки, собрались маленькие жители Нахичевани, которые не понаслышке знают об истории этого колоритного района и которые с большим удовольствием приобщились к армянской культуре.

ДЕНЬ НАРОДНОГО ЕДИНСТВА В ДЕТСКОЙ МОДЕЛЬНОЙ БИБЛИОТЕКЕ ИМЕНИ А.С. ПУШКИНА

С 27 по 29 ноября, в рамках сотрудничества Нахичеванской-на-Дону армянской общины и МБУК Ростовской-на-Дону городской Центральной библиотечной системы, в детской модельной библиотеке имени А.С. Пушкина прошел ряд мероприятий, посвященных Дню народного единства. Главными организаторами и участниками праздничных мероприятий стали детские объединения по изучению армянского языка и культуры «Аревик» (г. Ростов-на-Дону) и «Арарат» (г. Аксай) под руководством Петанян Лусине Гамлетовны.



Завершилось празднование Дня народного единства интересной и познавательной игрой, где участники узнали и вспоминали символы двух дружественных стран Россия–Армения.

Результат игры стал символом единства двух дружественных народов, живущих бок о бок друг с другом.

Благодаря детским объединениям «Аревик» и «Арарат» в детской модельной библиотеке имени А.С. Пушкина три дня подряд царил праздничный атмосфера.

Ев, որպես հայրենիքից դուրս հայրենիքը դաստիարակող մայր, խորին շնորհակալությունս եմ հայտնում Դոնի հայկական համայնքին և Պետական Լուսինեին այս ազգանվեր գործունեության համար:

Лиана ГЕВОРГЯН, зав. сектором детской модельной библиотеки имени А.С. Пушкина.



Праздник объединил ребят различных культур и народностей. Они с удовольствием слушали стихотворения армянских поэтов на армянском и русском языках в исполнении учащихся детских объединений «Аревик» и «Арарат», затем сами читали стихотворения русских поэтов.

Ребята отгадывали загадки, ответы на которые переводили на армянский язык и запоминали их звучание. Кроме музыки и поэзии, был представлен армянский национальный костюм – тараз.

Наши маленькие гости узнали об элементах костюма, о значении его орнаментов и цветов. Красоту и изысканность национального тараса помогла раскрыть Марина Мирзоян, исполнив армянский национальный танец «Цахкундж» (в переводе «цветочный букет»).

ՈՐ ԴԵՊՔՈՒՄ Ե ԱՆՁՆԱԳԻՐԸ ՏՐԿԵԼՈՒ 2 ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ. ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱՐԲԱՆՈՒՄԸ

ՀՀ ոստիկանության Անձնագրերի և վիզաների վարչության իրավաբանական բաժնի պետ Բրինա Մկրտչյանը ներկայացրեց Է պարզաբանում անձնագրերին առնչվող ՀՀ կառավարության վերջին օրենսդրական նախագծերի մասին կապված ինչպես անձնագրերի ժամկետների, այնպես էլ դրանցում կոնկրետ ծննդավայրը նշելու հետ:

— ՀՀ կառավարությունը հավանություն է տվել նույնականացման քարտերի և անձնագրերի մասին օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծերին: Գան մի շարք հարցեր, որոնք հուզում են մեր քաղաքացիներին: Օրինակ, գործող օրենսդրությամբ 16 տարին լրացած քաղաքացիներին անձնագիր տրամադրվում է մինչև 18 տարին լրանալը: Նախատեսվող փոփոխությամբ այն սահմանվում է մինչև 19 տարեկանը: Ինչու է և նման փոփոխությունն առաջարկվում:

— Ներկայում գործող իրավակարգավորումների համաձայն 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագիր տրամադրվում է մինչև 18 տարին լրանալը: Նշված նորմի կիրառումն անձանց համար առաջացնում է խնդիրներ Հայաստանի Հանրապետությունից դուրս իրենց իրավունքների իրացման շրջանակում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է օտարերկրյա պետություններում կրթության իրավունքի իրացման, միջազգային պորտալին մրցումների մասնակցության կամ առողջության հետ կապված խնդիրների լուծման դեպքերին:

— Գործող օրենսդրությամբ անձնագրում նշվում է ծննդավայր երկիրը, իսկ նախատեսվող փոփոխությամբ արդեն քաղաքացու ցայնությունը կարող է նշվել նաև քաղաքը: Որն է այս փոփոխության նպատակը:

— Այս փոփոխությունը կրկին նախատեսվում է ելնելով մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների իրացման նպատակից, և այստեղ անհարկի շահարկումներ իրականացնելը ճիշտ չէ: Ներկայում գործող իրավակարգավորումներով հստակեցված չէ ծննդավայրի նշման որևէ պահանջ, որի կապակցությամբ, որպես ծննդավայր, նշվում է պետությունը: Առաջարկվող փոփոխությամբ անձի ցանկությամբ կնշվի ծննդավայրը, օրինակ գյուղը, քաղաքը, մարզը: Նման հանգամանքների անհրաժեշտությունն առաջանում է միջազգայնորեն չճանաչված պետություններում կամ վիճարկելի տարածքներում ծնված անձանց իրավունքներն իրացնելու: Նշված փոփոխությամբ կկարգավորվի անձանց իրավունքների իրացումը:

— Ի՞նչ այլ կարևոր դրույթներ կառանձնացնենք այս նախագծից: — Որպես կարևոր փոփոխություն ցանկանում եմ առանձնացնել հին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետի երկարաժամկետ, որն ապահովելու է անձը հաստատող ճամփորդական փաստաթղթի անընդհատականությունը և նպաստելու քաղաքացիների իրավունքների անարգել իրացումը: Ներկայում անձնագրի տրամադրման ժամկետը սահմանված է 2021 թվականի դեկտեմբերի 31-ը, նոր փոփոխությամբ կերկարաձգվի մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը:

— Որպես կարևոր փոփոխություն կցանկանայի առանձնացնել անգիտակցի վիճակում գտնվող անձանց անձնագրավորման գործընթացի դյուրացումը: Գործող ընթացակարգերով անձնագիր տրամադրվում է անձի անձամբ դիմելու պարագայում, սակայն լիտում են դեպքեր, երբ անձը գտնվում է անգիտակցի վիճակում և նման պայմաններում սահմանափակվում է վերջինիս անձնագրավորման գործընթացը, ինչն էլ սահմանափակում է անձի իրավունքը, մասնավորապես, բժշկական օգնություն ստանալու պայմաններում: Խնդիրն առավել ցայտուն դարձավ պատերազմի ժամանակ անգիտակցի գտնվող

զինվորներին արտերկիր բուժման նպատակով տեղափոխելու ժամանակ: Առաջարկվող փոփոխությամբ նման կատեգորիայի անձանց անձնագրավորման համար կարող են դիմել մերձավոր ազգականները, ստացիոնար բուժում անցնելու դեպքում նաև բուժաստատության վարչակազմը:

— Շրջանառվում է նաև 1998 թվականի թիվ 821 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Նախատեսվում է անձնագրի վավերականության ժամկետը սահմանել երկու տարի ներկայում գործող 10 տարվա փոխարեն: Ի՞նչ կասեք այս մասին:

— Նշված փոփոխության կապակցությամբ շատ են շահարկումներն ամբողջ լրատվական դաշտում, որոնք մարդկանց մոտ առաջ են բերում անհիմն անհանգստություն: Այս կապակցությամբ հարկ եմ համարում նշել և ընդգծել, որ խոսքը վերաբերում է միայն կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 821 որոշման նախատեսված հին նմուշի անձնագրերի ժամկետին: Այլ ոչ թե կենսապահական տվյալներ պարունակող անձնագրերին, որոնք ինչպես տրվել են նախկինում 10 տարի ժամկետում, այդպես էլ շարունակելու են տրամադրվել նույն ժամկետով: Եվ այս պարագայում խոսք չի կարող լինել Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ճամփորդելու իրավունքը սահմանափակելու մասին:

Դեռևս 2012 թվականին ներդրվել է նոր կենսապահական տվյալներ պարունակող անձնագրերի համակարգը և այս շրջանակներում քաղաքացիներին տրամադրվել են կենսապահական տվյալներ պարունակող անձնագրեր և նույնականացման քարտեր: Պլանավորված է եղել ժամանակի ընթացքում ամբողջությամբ անցում կատարել կենսապահական տվյալներ պարունակող փաստաթղթերի տրամադրմանը, ինչով պայմանավորված 2013-2016 թվականներին դադարեցվել է հին նմուշի անձնագրերի տրամադրումը: Որոշ խնդիրներով պայմանավորված գործընթացը շարունակվում է:

գրերի տրամադրումը: Որոշ խնդիրներով պայմանավորված գործընթացը շարունակվել է: Ներկայում ՀՀ կառավարության համակարգում ընթանում են ակտիվ աշխատանքներ կենսապահական տվյալներ պարունակող նոր համակարգի ներդրման ուղղությամբ: Նոր կենսապահական համակարգի ներդրման կապահովվի ՀՀ-ի կողմից տրվող անձը հաստատող փաստաթղթերի միջազգային ստանդարտներին համապատասխանեցումը:

— Եթե քաղաքացին 5 կամ 10 տարվա վիզա ունի այս կամ այն երկիր մուտք գործելու համար, այդ դեպքում նա ի՞նչ պետք է անի:

— Օտարերկրյա պետության մուտքի թույլտվության ժամկետը որևէ կերպ չի առնչվում անձնագրի ժամկետի հետ: Այսինքն այն պարագայում, երբ անձին տրամադրվել է մուտքի թույլտվություն այն երկիր իբր ժամկետով, ապա անձը կարողանում է այդ թույլտվությունն օգտագործել ինչպես հին անձնագիրը սահմանափակ հույց տալով, այնպես էլ կարող է մոտենալ տվյալ երկրի իրավասու մարմին, որպեսզի մուտքի թույլտվության դրոշմակնիքը փոխանցվի նոր անձնագիր:

— Եթե քաղաքացին այս պահին ունի անձնագիր, որը դեռ 8 կամ 10 տարի վավեր է լինելու, այդ պարագայում ի՞նչ պետք է անի:

— Եթե քաղաքացին արդեն իսկ ստացել է 10 տարով իր անձնագիրը, ապա այն շարունակելու է գործել մինչև վավերականության ժամկետի ավարտը, սակայն եթե այդ ժամկետում քաղաքացին կորցնի իր անձնագիրը կամ դիմի փոխանակման համար, տվյալ դեպքում արդեն կտրամադրվի երկու տարի ժամկետով: Ընդգծել, որ կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տրամադրվող հին նմուշի անձնագրերն են տրվելու երկու տարի ժամկետով: Մինչ այդ 10 տարի վավերականության ժամկետով անձնագրերը գործելու են մինչև ժամկետի ավարտը: